ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
2009Թ. ՄԵԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐ 1.1

Դրամաշնորհային ծրագրեր գրելու հմտությունների պակաս

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.1

ՀԵԻԱ-ի վարչության անդամների, գրասենյակների ղեկավարների և անդամների (ըստ ցանկության) համար դրամաշնորհային ծրագրեր գրելու ուսուցման կազմակերպում.

Այս ուղղությամբ կազմավորվել է երկու խումբ, որոնց համար 2010թ.-ին կկազմակերպվի դրամաշնորհային ծրագրեր գրելու ուսուցում:

ԽՆԴԻՐ 1.2

ՀԵԻԱ-ի ֆինանսական միջոցների անբավարարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.1

Ձևավորել ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով աշխատանքային խումբ և վերանայել ՀԵԻԱ-ի ֆինանսական միջոցների հայթայթման պլանը:

Աշխատանքային խումբը ձևավորվել է հետևյալ կազմով.
Կարեն Զադոյան - խմբի ղեկավար (ՀԵԻԱ-ի նախագահ),
Արտակ Սարիբեկյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի գործադիր տնօրեն),
Էդուարդ Մանուկյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի ֆինանսական միջոցների հայթայթման պատասխանատու),
Մարատ Ատովմյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի վարչության անդամ),
Ռոբերտ Գրիգորյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի վարչության անդամ):

ՀԵԻԱ-ի ֆինանսական միջոցների հայթայթման պլանը գտնվում է վերանայման գործընթացում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.2

ՀԵԻԱ-ի աշխատակազմում հնարավորության սահմաններում ստեղծել ֆինանսական հայթհայթման հարցերով զբաղվող ստորաբաժանում.

Այս ուղղությամբ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, սակայն դեսուռևս ֆինանսական հայթհայթման հարցերով զբաղվող ստորաբաժանումը ստեղծված չէ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.3

Առնվազն 5 նոր դրամաշնորհային ծրագրի ստացում.

2009 թվականի ընթացքում ՀԵԻԱ-ն ստացել և իրականացրել է 5 նոր դրամաշնորհային ծրագրեր: Դրանք են՝

1. *«Հրազդան, Եղեգնաձոր և Աշտարակ քաղաքներում շահերի պաշտպանության և աջակցման կենտրոնների, իսկ Արարատ, Թալին և Ապարան քաղաքներում շահերի*

պաշտպանության և աջակցման ընդունարանների (տեղեկատվական կենտրոններ) ստեղծում և գործարկում».

2. *«Եվրոպական արժեքների ինտեգրումը Հայաստանի հակակոռուպցիոն ոլորտում՝ Վիշեգրադի խմբի պետությունների փորձը».*
3. *«Լսված լինելու իմ իրավունքը».*
4. *«ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիտորինգ».*
5. *«Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթ:*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.4

Ֆինանսական աղբյուրների բազմազանության (առնվազն 5 աղբյուր) ապահովում.

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՀԵԻԱ-ի ղեկավարությունը՝ հանձինս նախագահի և ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով աշխատանքային խմբի, կարողացել է ապահովել ՀԵԻԱ-ի ֆինանսական աղբյուրների բազմազանությունը՝ ֆինանսական միջոցներ ներգրավելով 5 տարբեր ֆինանսական աղբյուրներից: Մասնավորապես.

1. *ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր (USAID):*
2. *Վիշեգրադ միջազգային Հիմնադրամ (IVF)*
3. *"Oxfam Novib" հոլանդական կազմակերպություն.*
4. *ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ (OSCE Yerevan Office).*
5. *ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն:*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.5

Սփյուռքի հետ գործնական կապերի հաստատում և ընդլայնում՝ ֆինանսական միջոցների հայթայթման նպատակով.

Այս աշխատանքները գտնվում են ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով աշխատանքային խմբի ուշադրության կենտրոնում, դրանց իրականացման համար կատարվում են համապատասխան գործողություններ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.6

Եվրոպական և այլ երկրների տարբեր նմանատիպ հասարակական կազմակերպությունների հետ կապերի հաստատում՝ համատեղ ծրագրեր իրականացնելու միջոցով լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավելու համար:

Հաստատվել են մի շարք գործնական կապեր նմանատիպ հասարակական կազմակերպությունների հետ, որի արդյունքում համատեղ իրականացվել է «Եվրոպական արժեքների ինտեգրումը Հայաստանի հակակոռուպցիոն ոլորտում՝ Վիշեգրադի խմբի պետությունների փորձը» ծրագիրը, մասնավորապես ՀԵԻԱ-ն գործընկերական կապեր է հաստատել «Ագորա Կենտրոնական Եվրոպա» կազմակերպության (Չեխիա) և Ներքին Սիլեսիայի համալսարանի մշակույթի և կրթության ոլորտների ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի (Լեհաստան) հետ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.7

Գործընկեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ծավալում՝ փոխշահավետ հիմունքներով օգտագործելով նրանց ռեսուրսները

Այս ուղղությամբ իրականացվել են մի շարք կրթական միջոցառումներ, որոնց շրջանակներում փոխշահավետ հիմունքներով օգտագործվել է ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների լսարանային ռեսուրսները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.8

Պետական և ՏԻՄ-երի միջոցների ներգրավում

ՀԵԻԱ-ի ծրագրերի իրականացման ընթացքում գործնական կապեր են հաստատվել ՀՀ տարբեր մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որոնց հետ 2010թ.-ին ՀԵԻԱ-ն պատրաստվում է կնքել փոխըմբռնման հուշագրեր:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.9

Անդամավճարների հավաքման ցուցանիշների բարձրացում

Անդամավճարների հավաքման ցուցանիշների բարձրացման ուղղությամբ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնց արդյունքում թեև գրանցվել է ցուցանիշների որոշակի աճ, սակայն ընդհանուր առմամբ այդ ցուցանիշների աճը կերևա ի նվազ բարձրացում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.10

Կամավորական ներուժի օգտագործում

ՀԵԻԱ-ի գրասենյակների կողմից իրականացված բոլոր միջոցառումներին ակտիվորեն ներգրավել է կանավորական ներուժը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԽՆԴԻՐ 2.1

ՀԵԻԱ-ի անդամների, կամավորների ակտիվության և ՀԵԻԱ-ի աշխատակազմի գործունեության մեջ կամավորական հիմունքներով ներգրավածության ոչ բավարար մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.1

Գիտաժողովների, դատախաղ մրցույթների, բանավեճերի և այլ մասնագիտական միջոցառումների կազմակերպում, որը կներգրավի անհրաժեշտ մարդկային կամավորական ռեսուրսներ, այդ թվում նաև ՀԵԻԱ մարզային մասնաճյուղերի աշխատակազմերում:

Այս ուղղությամբ ՀԵԻԱ-ի բոլոր գրասենյակների կողմից կազմակերպվել են դասընթացներ, սեմինարներ, որոնց մասնակցել են ՀՀ իրավաբանական ԲՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների ուսանողներ, իրավաբաններ, ներակայացուցիչներ հասարակական կազմակերպություններից: Կազմակերպվել է նաև փաստաբանությանը նվիրված ավանդական գիտաժողովը և Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.2

ԲՈՒՀ-երի հետ ՀԵԻԱ-ի համագործակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացում՝ ՀԵԻԱ-ի աշխատակազմի գործունեության մեջ կամավորների ներգրավելու նպատակով:

Տարբեր ԲՈՒՀ-երի կամավորներ հաշվետու ժամանակաշրջանում ակտիվորեն մասնակցել են ՀԵԻԱ-ում իրականացվող աշխատանքներին, ընդ որում՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ կազմակեպչական բնույթի:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.3

Խրախուսական միջոցառումների իրականացում (ամսվա և տարվա լավագույն աշխատակազմի անդամ, ամսվա և տարվա լավագույն կամավոր):

Մշակվել է անհրաժեշտ աշխատանքային գործիքը, որը նախատեսվում է գործարկել:

ԽՆԴԻՐ 2.2

ՀԵԻԱ-ի աշխատակազմի անդամների վերապատարաստման, այդ թվում մասնագիտական և անգլերեն լեզվի վերապատրաստման անհրաժեշտություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2.1

Կարիքի գնահատման հիման վրա աշխատակազմի անդամների շարունակական վերապատարաստման, այդ թվում մասնագիտական և անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Նախատեսվում է իրականացնել 2010թ.-ից:

ԽՆԴԻՐ 2.3

ՀԵԻԱ-ի աշխատակազմի անդամների մրցունակ աշխատավարձերի և ՀԵԻԱ-ի աշխատակազմի մարզային գրասենյակների աշխատողների աշխատանքային պայմանների ոչ բավարար մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.3.1

Ֆինանսական միջոցների վերանայման քաղաքականության իրականացում՝ ուղղված աշխատավարձերի բարձրացմանն և մարզային գրասենյակների աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում բարձրացվել են ՀԵԻԱ-ի աշխատակազմի, այդ թվում մարզային գրասենյակների աշխատակիցների աշխատավարձերը, մարզային գրասենյակները համալրվել են ժամանակակից համակարգչային տեխնիկայով, իսկ նորաբաց գրասենյակները նաև նոր աշխատանքային կահույքով, 2010թ.-ի սկզբին նախատեսվում է նաև ամբողջությամբ թարմացնել մարզային գրասենյակների գրադարանները՝ համալրելով նոր հրատարակված մասնագիտական գրականությամբ:

ԽՆԴԻՐ 2.4

Աշխատանքի գնահատման համակարգի ոչ բավարար մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.4.1

Մշակված չափանիշներին համապատասխան աշխատանքի գնահատման իրականացում և գնահատման արդյունքների օգտագործում աշխատանքի արդյունավետության բարձրացման համար:

Մշակվել են աշխատակազմի աշխատանքի գնահատման մեխանիզմները:

ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՆԴԻՐ 3.1

Շահառուների հետ հետադարձ կապի ոչ բավարար մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1.1

ՀԵԻԱ-ի գործունեության և ծրագրերի արդյունքների վերլուծություն, և գնահատված կարիքի հիման վրա ՀԵԻԱ-ի ծրագրերի արդյունավետության բարձրացում և շահառուների հետ հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործում:

ՀԿ-շահառու հետադարձ կապի մեխանիզմների մշակման և կիրառման նպատակով հնարավորության սահմաններում հավաքագրվել են շահառուների կարծիքները և տեսակետները: Սակայն ՀԿ-շահառու հետադարձ կապի մեխանիզմները դեռևս ամբողջությամբ չեն մշակվել և կիրառվել:

ԽՆԴԻՐ 3.2

Ներքին մոնիտորիգի և գնահատման համակարգի զարգացում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.2.1

Մեծ ծրագրերի անկախ մոնիտորինգի և գնահատման իրականացում: Ներքին մոնիտորինգի և հաշվետվողականության մեխանիզմի կատարելագործում՝ մարզային գրասենյակների հետ համագործակցային սկզբունքի կիրառմամբ:

Ներքին մոնիտորինգի և հաշվետվողականության մեխանիզմը կատարելագործվել է, որը էապես նպաստում է կատարված աշխատանքների արդյունքների լիարժեք ներկայացմանը: Հաշվետու ժամանակահատվածում մեծ ծրագրերի անկախ մոնիտորինգ և գնահատում չի իրականացվել:

ԽՆԴԻՐ 3.3

ՀԵԻԱ-ի կողմից իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների վերաբերյալ հանրության տեղեկացվածության ոչ բավարար մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.3.1

ՀԵԻԱ-ի հանրության հետ կապերի ռազմավարության մշակում և ներդրում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԵԻԱ-ի կողմից մշակվել հանրության հետ կապերի ռազմավարություն և հետևողական կերպով իրականացվել է այն: Մասնավորապես, կենտրոնական և տեղական հեռուստաընկերություններում տեղադրվել են ՀԵԻԱ-ի կողմից մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների և իրականացվող աշխատանքների վերաբերյալ սոցիալական հայտարարություններ, տեղական հեռուստաընկերություններով հեռարձակվել են իրավաբանական բնույթի հեռուսատահաղորդումներ՝ ՀԵԻԱ-ի անդամների և աշխատակիցների մասնակցությամբ, իրականացվել են հանրային իրազեկության սեմինարներ, կազմակերպվել են երթեր, հրատարակվել և ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում տարածվել են իրավաբանական բնույթի տեղեկատվական թերթիկներ, կատարվել են այլ աշխատանքներ: